

ԹՎԱՄԱՐՏԻԿ

Առանց թվերի դժվար է պատկերացնել մեր կյանքը: Թվերը մեզ պետք են ամեն քայլափոխի, երբ որոշում ենք, թե որ համարի երթուղային տաքսին նստենք, երբ ուզում ենք իմանալ, թե ի՞նչ արժե որևէ ապրանք, կամ քանի՞ տարեկան է մեզանից որևէ մեկը և այլն:



7 Ա ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ՈՒՍՈՒՑԻՉ ' ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Գուլազակիք հեֆիաթը , հետո լուծիր

1. Լինում է, չի լինում՝ մի աղքատ ջաղացպան: Մի պատուված ֆուրֆ հագին, մի ալրոտ փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր ջաղացում: Ունենում է մի մոխրոտ բաղաջ ու մի կտոր պանիր: Մի օր գնում է, որ ջաղացի ջուրը թողնի, գալիս է, տեսնում՝ պանիրը չկա: Մտածում է. «Ես ունեի 500գ պանիր, նախահաճին կերա նրա 20%-ը, հաճին՝ մնացածի 25%-ը, 100գ տվեցի ագուավներին: Ու՞ր է մնացածը»:
Ինչքան պանիր չկար:

2. Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում: Հուսահատված մի օր նա վեր կացավ, թե՛ պետք է գնամ գտնեմ աստծուն, տեսնեմ՝ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատությունից, ու ինձ համար մի բան խնդրեմ: Ճանապարհին մի գայլ պատահեց. Գայլը ասաց «հարցրու աստծուց.

— Ես բռնել էի 10 գառ՝ մեկին կերա, 30%-ը տվեցի աղվեսներին, մնացածը փախան: Քանի՞ գառ է փախել»:

3. Լինում է, չի լինում՝ մի ծիտ: Մի անգամ էս ծիտի ոտը փուլ է մտնում: Դեռ է թոչում, դեռ է թոչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի՝ թոնիր վառի, հաց թխի: Ասում է. «Քեզ կտամ 8 հյուղ, նրա 25%-ը վառի, մնացածը պահիր ֆեզ»:
Քանի՞ հյուղ կմնա պառավի մոտ վառելուց հետո:

4. Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ: Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում ու մկըկում, կանչում. «Բերել եմ քեզ 1 տուկ խոտ, 20%-ը ֆանապարհին զցեցի»: Ինչքան մնաց:

5. Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Էս թագավորը իր երկրում հայտնում է.

— Ով էկաքս սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան:

Գալիս է մի հովիվ: Ասում է. «Ունեի 10 կգ ոսկի, 20%-ը տվեցի Աբելին, 30%-ը՝ Հաբեթին, հիմա ունեմ 6 կգ ոսկի»: Արդյո՞ք ճիշտ է ասում:

6. Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում: Նա հարցրեց, թե մի ամսում քանի փայտ են կոտրում: Գյուղացիները պատասխանեցին՝ մեկ օրում՝ տասը փայտ: Փանի՞ փայտ են կոտրում գյուղացիները օգոստոս ամսում:

7. Լինում է, չի լինում՝ մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակատար: Օրական մի քանի ձուկ է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը: Մեկ օրում տուն 7 ձուկ է բերում: Փանի՞ ձուկ նա կբերի 1 շաբաթում:

8. Լինում է, չի լինում՝ մի խեղճ մարդ, անունը՝ Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ վախկոտ, որ մեռակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար: Նրանց գյուղ մեկ օրում գալիս են 5 մարդ: Փանի՞ մարդ կգա նրանց գյուղ մի շաբաթում:

9. Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում: Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում: Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը՝ մարդուն, ու միշտ կովելիս են լինում: Նրանք օրը վեց ժամ կովում են : Փանի՞ ժամ են կովում նրանք մի շաբաթում:

10. Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ: Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է դրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբյուրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն — իրեն միտք է անում: Հետաքրքիր է՝ քանի՞ նյուղ կա այս ծառի վրա: Կան 7 մեծ, 3 միջին, 10 փոքր նյուղեր: Փանի՞ նյուղ կա ծառի վրա:

11. Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը՝ Փանոս: Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է՝ ձախ է գնում: Դրա համար էլ անունը դնում են Ձախորդ Փանոս: Ունեցած — չունեցածը մի լուծ եզն է լինում, մի սեղ ու մի կացին: Այս կացնով օրը 10 փայտ

են կոտրում, եզով 1 հեկտար հող են վարում: Սեպտեմբեր ամսին ինչքան օգուտ են ունենում:

12. Լինում է, չի լինում՝ մի փոքրիկ աղջիկ: Մայրիկն ու տատիկը նրան անչափ շատ էին սիրում: Թոռնիկի ծննդյան օրվա կապակցությամբ տատիկը նրան կարմիր գույնի մի գլխարկ էր նվիրել, որը շատ էր դուր եկել աղջնակին: Այդ գլխարկը արժե 1200 դրամ: Ինչքան կարժեհան տասը այդպիսի գլխարկ:


13. Մի հարուստ մարդու կինը ծանր հիվանդանում է, երբ զգում է, որ վերջն էկել է, էլ վեր չի կենալու, կանչում է միևուհար աղջկան, ասում.

— Սիրելի գավակս, համեստ ու խոնարհ եղիք, և աստված միշտ կօգնի, ես էլ վերևից կհսկեմ քեզ ու մենակ չեմ թողնի: Ինձ բեր մի դեղ, որ խմեմ:

Այդ դեղը արժի 2500 դրամ: Ամիսը այդ դեղից գնում է հինգ անգամ: Ինչքան գումար է ծախսում դեղերի վրա մեկ ամսում:

14. Մի մեծ անտառի բերանում ապրում էին մի աղքատ փայտահատ ու իր կինը: Երկու երեխա ունեին, տղի անունը Հենգել էր, աղջկանը՝ Գրետել: Երեխաները որոշում են գնալ անտառ՝ բերել փայտ: Մեկ ժամում հավաքում են 100 փայտ: Քանի՞ փայտ կհավաքեն 5 ժամում:

15. Մի աղջիկ է լինում, էս աղջիկը մի անգամ դուրս է գալիս իրենց տնից ու գնում ընկնում անտառը: Անտառում մոլորվում է, համփի է ման գալիս՝ համփա չի գտնում, ու գալիս է դեմ առնում մի տնակի: Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում է՝ տանը ոչ ոք չկա: Միայն սեղանին դրված էր երեք ափսե՝ մեծ, միջին և փոքր: Մեծ ափսեի մեջինը նա ուտում է մի քոպեում, միջին ափսեինը՝ 30 վայրկյանում, փոքր ափսեինը 15 վայրկյանում: Ինչքան ժամանակ է ծախսում հաց ուտելու վրա:



Օտար լեզու-----մաթեմատիկա

16. Թվանշանները գրե՛ք ուսերեն տառերով և այդ բառերը դասավորե՛ք ուսերեն այբբենական կարգով: Փանի՞ բառ կլինի իր արժեքին համապատասխանող դիրքում:

17. Գրե՛ք ուսերեն տառերով երկնիշ թիվ, որի գրառման.

ա) առաջին և վերջին տառերը բաղաձայն են,

բ) առաջին տառը ձայնավոր է, իսկ վերջինը՝ բաղաձայն:

18. Թվանշանները գրե՛ք անգլերեն տառերով և այդ բառերը դասավորե՛ք անգլերենի այբբենական կարգով: Փանի՞ բառ կլինի իր արժեքին համապատասխանող դիրքում:

19. Գրե՛ք անգլերեն տառերով երկնիշ բնական թիվ, որի գրառման.

ա) առաջին և վերջին տառերը ձայնավոր են,

բ) առաջին և վերջին տառերը բաղաձայն են,

գ) առաջին տառը ձայնավոր է, իսկ վերջինը՝ բաղաձայն:

20. Անգլերենի այբուբենում ֆանի՞ ձայնավոր կա, որի հարևան երկու տառերը բաղաձայն են:.

21. Թվանշանները գրե՛ք գերմաներեն տառերով և այդ բառերը դասավորե՛ք այբբենական կարգով: Փանի՞ բառ կլինի իր արժեքին համապատասխանող դիրքում:

22. Գրե՛ք գերմաներեն տառերով երկնիշ բնական թիվ, որի գրառման.

ա) առաջին և վերջին տառերը ձայնավոր են,

բ) առաջին և վերջին տառերը բաղաձայն են,

գ) առաջին տառը ձայնավոր է, իսկ վերջինը՝ բաղաձայն:

23. Գերմաներենի այբուբենում ֆանի՞ ձայնավոր կա, որի հարևան երկու տառերը բաղաձայն են:.

24. Գտնել օրինաչափությունը, ավելացնել 2 թիվ

ա)1,4,2,3,3,3,.....

բ)1,2,2,1,3,1,4,3,..... գ) 1,4,2,4,3,4,.....

դ)1,2,2,2,3,2,..... ե)1,3,2,3,3,5,.....





ՊԱՏԱՍԽԱՆԸ ' ԹԻՎ Է

25. «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ ֆանի^օ անգամ է հանդիպում «սիրում» բառը:

26. Քանի^օ տնից է բաղկացած «Տաղ Անձնական»-ը:

27. Քանի^օ մասից է բաղկացած «Սպիտակ ձի»-ն:

28. Քանի^օ անգամ է կրկնվում գարուն բառը «Քարնանամուտ» բանաստեղծությունում:

29. Քանի^օ տնից է բաղկացած «Հայ ժողովրդի երգ»-ը:

30. Քանի^օ տնից է «Անտառում» բանաստեղծությունը:

31. «Քելե կառ» բանաստեղծության մեջ ֆանի^օ անգամ է կրկնվում «քելե» բառը:

32. «Հայաստան» բանաստեղծության մեջ ֆանի^օ անգամ է կրկնվում «դու» դերանունը:

33. «Ծնվել եմ» բանաստեղծության մեջ ֆանի^օ անգամ եմ կրկնվում «ծնվել եմ» բառակապակցությունը:

34. Քանի^օ նույն թիվ կա Զաբել Եսայանի ծննդյան և մահվան տարեթվերում:

35. Քանի՞ օբյեկտներ կա «Հայ ժողովրդի երգ» բանաստեղծության վերնագրում:

36. Տառերը փոխարինե՞ք թվերով. գրե՛ք հեմարիտ հավասարություն (տարբեր տառերին համապատասխանում են տարբեր թվեր)

ա) ԲԱԴ+ՍԱԳ = ԹԱԹ

բ) ՄԵԿ+ՄԵԿ = ԵԲԿՈԻ

գ) ՏԱՍ+ՏԱՍ = ՔՍԱՆ

դ) ГАВ+ВАЙ=РАК

37. Քանի՞ անդամից է կազմած «Մեր տունը» հատվածի ընտանիքը:

38. Ո՞ր թվերի գույգն է հանդիպում Սիլվա Կապուտիկյանի ծննդյան տարեթվի մեջ:

39. Ե՞րբ է ծնվել «Անունդ տալիս» բանաստեղծության հեղինակը:

40. Հրանտ Մաթևոսյանը ե՞րբ է գրել «Օգոստոս» ժողովածուն:

41. Ե՞րբ է Մարտիրոս Սարյանը ստեղծել «Իմ հայրենիքը» նկարը:

42. Քանի՞ փոխաբերություն կա «Թագադրում» բանաստեղծության մեջ:

43. Քանի՞ բայթ է 1 Կբայթը:

Թիվը ներկայացնել աստիճանի տեսքով:

44. 2 Գբայթը քանի՞ Մբայթ է:

45. Ո՞ր պարզ թիվն է ցույց տալի 3072 Գբայթը, արտայահտած Տբայթով:

46. 5 Պբայթը քանի՞ Տբայթ է:

47. Մեր խնդրագրքի առաջին էջը քանի՞ բայթ ինֆորմացիա է պարունակում:

48. Քանի՞ տարի է տևել բրոնզե դարը:

49. Երկնիչ թիվ, որը ցույց է տալիս Սարգոս I արքայի կառավարման ժամանակը:

50. Լրացնել բաց թողնված թվերը

ա) ԻՇպուխնի արքայի թագավորության թվերը

Ք.ա. մոտ *25- *10թթ,

բ) Մենուա արքայի թագավորության թվերը

Ք.ա. 81* - 78* թթ,

գ) Ալեքսանդր Մակեդոնացու Փոֆր Ասիա ներխուժման տարեթիվը

Ք.ա. 3*4թ,

դ) Երվանդ IV արքայի գահակալման տարեթիվը

Ք.ա. 22* - 2*1թթ,

ե) Արտաշատ մայրաքաղաքի կառուցման տարեթիվը

Ք.ա. **5թ,

զ) Ե՞րբ է ստեղծվել Բագրատունյաց Հայաստանը

8*2 թ.:

51. Աշոտ I-ի գահակալման տարեթիվերում ամենաշատ հանդիպող թվանշանը:

52. Ե՞րբ է ընդունվել Քրիստոնեությունը որպես պետական կրոն:

53. Ե՞րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը:

54. Անիի կառուցման տարեթիվը:

55. Քանի՞ տարեկանում է գահ բարձրացել Գագիկ II-ը:

56. Ձկան սրտի խոռոչների քանակը:

57. Բզեզները միջատների քանի՞ տոկոսն են կազմում:

58. Բակտերիաները ո՞ր թվականներին են առաջին անգամ հայտնաբերվել:

Ճիշտ է արդյո՞ք

59. Համո Սահյանի ծննդյան տարեթիվը բաժանվում է 2-ի:

60. Պարույր Սևակի ծննդյան տարեթիվը բաժանվում է ծննդյան ամսաթվին:

61. «Կարմիր Գլխարկ» հեֆիաթը գրել է Հոհաննես Թումանյանը:

62. Պարույր Սևակը ծնվել է 1925 թվականին:





ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ

9X9 դասուր բաժանի ֆառակուսիների և ուղղանկյունների այնպես, որ
 Օ տառը գտնվի ուղղանկյան մեջ, իսկ S տառը գտնվի ֆառակուսու մեջ:
 63.

			0					S
	S							
		S	S					
				0				0
S	0	0	S		S			0
S	S	0				S	S	
S			0					S
	0	0	0					
		0		0	0			
								0
	S		S					

64.

65.

66.

67.

	0		S	0						
		0		0						
	S			0						
0			S							
				0	0					
S	S	S		0					0	
0				S						
										0
	0									0
	0	S							S	
0		0	0						S	

68.



ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

69. Գտնել մասշտաբը , եթե ֆարսեզի վրա

ա) Գեղաշենից Երևան հանապարհը 8 սմ է:

բ) Գյումրիից Աշտարակ՝ 3սմ

գ) Գյումրիից Գորիս՝ 6սմ

դ) Վանաձորից Մեղրի՝ 5սմ

ե) Գեղաշենից Մարտունի՝ 11սմ

զ) Նոր Նորքից Գեղաշեն՝ 3սմ

70. Երևանից Դիլիջան իրար ընդառաջ դուրս են եկել երկու հեծանվորդ, մեկի արագությունը՝ 10կմ/ժ, մյուսինը՝ 15կմ/ժ:

Ինչքան կլինի նրանց հեռավորությունը 2 ժամ հետո:

71. Մեֆենան ընթանում է 69կմ/ժ արագությամբ: Փանի՞ ժամում կհասնի Դիլիջանից Երևան:


72. Գեղաշենից Երևան ավտոմեֆենան ընթանում է 70 կմ/ժ արագությամբ: Փանի՞ րոպեում կհասնի:

73. Գեղաշենից Երևան հանապարհի կեսը մեֆենան գնում էր 80կմ/ժ արագությամբ, մյուս կեսը՝ 100կմ/ժ: Փանի՞ րոպեում կհասնի մեֆենան Գեղաշենից Երևան:

74. Մեֆենան ընթանում է 80կմ/ժ արագությամբ Գեղաշենից Աբովյան:

Մի ժամում կհասնի՞ տեղ:

75. Հրազդանից Գեղաշեն իրար ընդառաջ դուրս են եկել երկու հեծանվորդ, մեկի արագությունը՝ 17կմ/ժ, մյուսինը՝ 15կմ/ժ: 1 ժամ հետո ինչքան կլինի նրանց միջև հեռավորությունը:



Պատասխաններ

1. Զախչախ թագավորը, 200 գ
 2. Անիտեղ մարդը,
 3. Ծիտը, 6 հյուսի
 4. Ուլիկը, 2տուկ
 5. Սուտասանը, ոչ
 6. Կացին ախպեր, 300
 7. Խոսող ձուկը, 42
 8. Քաջ Նագարը, 35
 9. Բարեկենդանը, 42
 10. Կիկոսի մահը, 20 հյուսի
 11. Զախորդ Փանոսը, 300 փայտ, 30 հա
 12. Կարմիր Գլխարկը , 12000 դրամ
- 25.7
- 26.5
- 27.9
- 30.7
- 34.2
- 36.ա) $201 + 405 = 606$
- բ) $512 + 512 = 1024$
- գ) $602 + 602 = 1204$
- դ) $402 + 201 = 603$
45. 3
- 49.10
- 50.ա) 8 բ) 0և6
- գ) 3 դ) 0
- 63.

			0					S
S								
					0			0
	0							
s							S	
S			0					

66.

	0			S	0			
					0			
0				S				
						0		
				S				
								0

70.14 հմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՒՇԱԿԻՐ ՀԵՔԻԱԹԸ, ՀԵՏՈ ԼՈՒԾԻՐ-----	2
2. ՕՏԱՐ ԼԵԶՈՒ-----ՄԱԹԵՄԱՏԻԿԱ -----	6
3.ՊԱՏԱՍԽԱՆԸ ' ԹԻՎ Է -----	8
4.ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ -----	12
5.ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ -----	14
Պատասխաններ -----	16
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ -----	18

Կոտայքի մարզի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի

7 դասարանի աշակերտներ

Ներսես Հակոբյանը, Էլեն Հակոբյանը, Նարեկ Անտոնյանը

Ալեքս Թադևոսյանը, Ավետ Խաչատրյանը, Ալեն Անտոնյանը

Միլենա Իսախանյանը, Աննա Գալստյանը, Մանուկ Մանուկյանը

Անգելինա Մկրտչյանը, Գոռ Ավագյանը, Մարի Եղիազարյանը

Ռազմիկ Մխիթարյանը, Արտյոմ Հովհաննիսյանը:

2024թ.